

պաշտպան հանդիսացաւ, սպառնաց Մեւքիսեդեկին կոչկոճել մինչեւ ի մահ: Շղթաներու ծանրութեան տակ անճարացած կ'երեւայ թէ իրբեւ խոյժ առաջարկեց Մեւքիսեդեկ արծաթասէր Շահին ի զին ազատութեան Աթոռէն վճարել արքունի գանձին տարեկան 100 թուման: Առաջարկութիւնը աւելի շահաւոր համարեցաւ Շահը քան կաթողիկոսին անօգուտ մահը: Մեւքիսեդեկ ազատ արձակուեցաւ: Դաւիթ կաթողիկոս, որ անընդունակ էր զբամական մրցութեան, անճար հրաժարեցաւ Աթոռէն եւ մեկուսացաւ Պարսկաստան (1615):

Առաքել Դաւրիժեցի, որ հարցաքննած է այս մասին ժամանակակից ծերերը, այսպէս կը պատմէ հարկադրութեան սկզբնաւորութիւնը. Դաւիթ եւ Մեւքիսեդեկ կաթողիկոսները իրարու ներհակ ինկած էին. Դաւիթ յեցած Զուղայեցիներու վրայ կը ջանար կրկին ձեռք բերել կաթողիկոսական իշխանութիւնը, զոր Մեւքիսեդեկ յինքն վտարած էր. բայց ասիկա թիկունք ունենալով իրեն Ամիրզունէ խանը կը պաշտպանէր յամառօրէն իր դիրքը: Զուղայեցիք պատրուակ առնելով այն հանգամանքը թէ Մեւքիսեդեկ առանց Շահի հրամանին հեռացած էր Սպահանէն եւ գաղտնի վաճառած է Հոփսիսիմեանց եւ ուրիշ վկայից մասունքները լատին կրօնաւորներու, ամբաստանեցին զինքը Շահ Աբասին, երբ ասիկա Գորի կը գտնուէր: Մեւքիսեդեկ շղթայակապ հանուեցաւ Շահին առջեւ: Ի սկզբան իւր բարկութեան մէջ մտադրած էր Շահը մինչեւ